

ԱՄՓՈՓ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀՀ կառավարության հակաճգնաժամային միջոցառումների իրականացման մասին

Ներածություն

1. Համաշխարհային ֆինանսական ճգնաժամի բացասական ազդեցության առաջին ալիքին Հայաստանի Հանրապետությանը հաջողվեց դիմակայել, նախ, շնորհիվ արդյունավետ ֆինանսական վերահսկողության, որի արդյունքում ֆինանսական համակարգի կայունությունը բնութագրող ցուցանիշները պատմականորեն գտնվել են բարձր մակարդակի վրա եւ երկրորդ` ՀՀ տնտեսության ֆինանսական հատվածում «տաք փողերի» բացակայության: Միննույն ժամանակ թույլ էին կապերը միջազգային ֆինանսական շուկաների այն հատվածների հետ, որտեղ արձանագրվեց ճգնաժամի առաջին ալիքը (**sub-prime markets**): Մասնավորապես, ի տարբերություն զարգացած երկրների, Հայաստանի ֆինանսական շուկաներում` բանկերում եւ այլ ֆինանսական կազմակերպություններում չորսնորվեց խուճապ, չսրվեց իրացվելիության նկատմամբ պահանջարկը: Եվ չնայած այն հանգամանքին, որ **2008թ.** ՀՆԱ-ի հավելածը ծրագրվածից ցածր է, այնուամենայնիվ, տնտեսությունն արձանագրեց **6.8%** տնտեսական աճ` ԱՊՀ երկրների **5%** տնտեսական աճի միջին ցուցանիշի դիմաց: Նշենք, որ Հայաստանը տնտեսական աճի ցուցանիշով առաջ է անցել Ռուսաստանից (**5.6%**) և Ուկրաինայից (**2.1%**):
2. Այնուամենայնիվ Հայաստանին, ինչպես եւ աշխարհի ամեն մի երկրի, չհաջողվեց խուսափել ճգնաժամի ազդեցությունից, որի հիմնական հարվածն իր վրա ընդունեց տնտեսության իրական հատվածը` արձանագրելով անկման միտումներ: Դա հիմնականում պայմանավորված էր հետեւյալ գործոններով.
 - Մասնավոր տրանսֆերտների կրճատմամբ,
 - Համաշխարհային շուկաներում հումքային ապրանքների եւ, հատկապես, մետաղների գների նվազմամբ,

- Համաշխարհային պահանջարկի նվազման հետևանքով հայաստանյան արտահանելի ապրանքների եւ ծառայությունների արտահանման պահանջարկի անկմամբ,

ՀՀ տնտեսությունն ներհոսող ներդրումների ծավալների անկմամբ՝ պայմանավորված համաշխարհային տնտեսությունում ֆինանսական միջոցների լիկվիդայնության պակասով:

3. Համաշխարհային շուկաներում անշարժ գույքի շուկայի անկումը հանգեցրեց Հայաստանի շուկայի նկատմամբ հետաքրքրության անկման, որը, զուգորդվելով (կամ փոխպայմանավորված) ներդրումների կրճատմամբ, ի վերջո հանգեցրեց վերջին տարիներին տնտեսության հիմնական շարժիչ ուժը հանդիսացող ճյուղի՝ շինարարության ժամանակավոր սառեցման: Բնակչության եկամուտների անկումը և սպառման վարքագծի փոփոխությունը մի կողմից, և արտաքին պահանջարկի կրճատումը մյուս կողմից, հանգեցրին տնտեսության մի շարք ճյուղերում ակտիվության կրճատման: Արդեն **2009թ.** առաջին չորս ամիսների արդյունքով գրանցվեց **9.7** տոկոս տնտեսական անկում:

4. Գնաճային դաշտը Հայաստանում ամենացածրն է եղել ԱՊՀ-ում, որի շնորհիվ ապահովվել է տնտեսության համընդհանուր կայունությունը: Տարեվերջյան գնաճը **2008թ.** կազմել է ընդամենը **5.2%**՝ ԱՊՀ երկրների **14.8%** դիմաց: Գնաճի ցածր մակարդակին նպաստել է նաև ուժեղ և կայուն ազգային արժույթ ունենալու քաղաքականությունը, որն էապես մեղմացրել է գնաճային ճնշումները, որոնք պայմանավորված էին Հայաստան ներկրվող որոշ ռազմավարական ապրանքատեսակների (հիմնականում էներգակիրներ և սննդամթերք) միջազգային գների բարձրացմամբ: **2009թ.** ապրիլին և մայիսին նախորդ ամսվա նկատմամբ արձանագրվել է համապատասխանաբար **3.2%** և **1.6%** գնաճ, որի պարագայում մայիսի վերջին **12**-ամսյա գնաճը կազմել է **3.4%**՝ գտնվելով նպատակային միջակայքի ստորին հատվածում: Նշված ժամանակահատվածում գնաճին նպաստել են մարտի սկզբին դրամի կտրուկ արժեզրկման հետևանքով պայմանավորված ներմուծված ապրանքների գների ճշգրտումը, և ապրիլից հիմնական կոմունալ ծառայությունների սակագների բարձրացումը:

5. Հարկային եկամուտների հավաքման և վարչարարության բարելավման առումով **2008թ.** աննախադեպ է եղել՝ հարկեր/ՀՆԱ հարաբերակցությունն աճել է **0.9** տոկոսային կետով և կազմել **17.0%**: Այս արդյունքին հնարավոր է եղել հասնել հարկային վարչարարության բնագավառում իրականացված արմատական բարեփոխումների շնորհիվ, որի հետևանքով էապես ավելացել են հարկային մուտքերը պետական բյուջե, ինչն ընձեռել է երկրում սոցիալական ուղղվածություն ունեցող խնդիրների լուծման բացառիկ կարողություններ:
6. Պետական պարտքի կառավարման քաղաքականությունը եղել է զգուշավոր՝ արտաքին պետական պարտք/ՀՆԱ հարաբերակցությունը կազմել է **13.4%**՝ ԱՊՀ երկրների **33.0%**-ի դիմաց: Նշենք, որ պետական պարտքի ցածր մակարդակը ճգնաժամի ներկա փուլում հարկաբյուջետային մասնրի հնարավորություն է տալիս, այսինքն՝ հնարավոր է լրացուցիչ պարտքային պարտավորություններ ստանձնել՝ առանց վտանգելու պարտքի կայունության ցուցանիշները: Այս հանգամանքով է պայմանավորված, որ միջազգային ֆինանսական եւ տնտեսական ճգնաժամի ազդեցությունը Հայաստանի տնտեսության վրա մեղմելու նպատակով, կառավարությունն ակտիվ բանակցություններ է վարել միջազգային դոնոր-կազմակերպությունների եւ գործընկեր երկրների հետ՝ արտոնյալ պայմաններով վարկային ռեսուրսներ ներգրավելու համար: Արժույթի միջազգային հիմնադրամի, Համաշխարհային բանկի, Ասիական զարգացման բանկի եւ Ռուսաստանի Դաշնության կառավարության հետ հետևողական աշխատանքի արդյունքում առաջիկայում Հայաստանին կհատկացվի ավելի քան **1.6** մլրդ ԱՄՆ դոլար, որն ուղղվելու է արտաքին աշխարհից եկող ֆինանսատնտեսական ճգնաժամի բացասական հետևանքները ՀՀ տնտեսության վրա մեղմելուն, մասնավորապես՝ երկրի վճարահաշվարկային համակարգի կայունության ապահովմանը, գործարար ակտիվության խթանմանը, սոցիալական եւ ֆիզիկական ենթակառուցածքների զարգացմանը: Նշենք, որ անկախ Հայաստանի պատմության, եւ ընդհանրապես, դոնոր կազմակերպությունների հետ երկրների հարաբերությունների միջազգային պրակտիկայում սա աննախադեպ ձեռքբերում է, ինչը վկայում է միջազգային

Ֆինանսական կազմակերպությունների եւ գործընկեր երկրների կողմից Հայաստանի կառավարության որդեգրած քաղաքականության նկատմամբ բարձր վստահությունը:

7. **2009թ.** մարտի սկզբից Հայաստանը վերադարձավ լողացող փոխարժեքի ռեժիմին: Նշենք, որ մինչ այդ առաջացել էին բանկային համակարգից խնայողությունների արտահոսքի և դրամային ավանդները դուրսարյինով փոխարինելու ճնշումներ, որոնք պայմանավորված էին ազգային արժույթի արժեզրկման սպասումներով: Այս ամենը ստեղծել էր բանկային համակարգի իրացվելիության և կապիտալի բավարարության հետ կապված ռիսկեր: Դրանք չեզոքացնելու նպատակով ԿԲ-ն տարեսկզբից մեծացրել էր միջամտությունն արտարժույթի շուկայում՝ փոխարժեքի ժամանակավոր կայունացման միջոցով բանկային համակարգին հնարավորություն ընձեռելով վերակառուցել հաշվեկշիռը: Մարտի սկզբին, երբ ֆինանսական համակարգն արդեն բավարար կապիտալացված էր, իրացվելի և պատրաստ էր դիմակայելու ճգնաժամի հետագա մարտահրավերներին, ԿԲ-ն դադարեցրեց ակտիվ միջամտությունն արտարժույթի շուկայում՝ վերադառնալով լողացող փոխարժեքի քաղաքականությանը: Նման քաղաքականության հիմնական նպատակը համապատասխան ամուր հենք ստեղծելն էր արդյունավետորեն դիմագրավելու փոխարժեքի ռեժիմի ազատականացմամբ պայմանավորված ճնշումներին: Ժամանակը ցույց տվեց, որ փոխարժեքը միանգամից ազատականացնելու քաղաքականությունն արդարացված էր: Փոխարժեքի աստիճանական ազատականացման պարագայում հասարակության եւ գործարար շրջանակներում էապես կբարձրանար անորոշության աստիճանը, ինչն իր հերթին կբերեր փոխարժեքի անընդհատ չարդարացված աճմանը: Իսկ վերջինս խեղաթյուրումներ կմտցներ տնտեսության մեջ, ինչը լրջագույն խոչընդոտ է բիզնեսի համար: Բացի դրանից, այդ պարագայում կարող էին ի հայտ գալ որոշ սպեկուլյատիվ դրսևորումներ, որոնք կխաթարեին շուկայում առկա հավասարակշռությունը: Հայաստանի իշխանությունների այս քաղաքականությունը ողջունել են նաև հեղինակավոր ֆինանսական կառույցները, ինչպիսիք են Արժույթի միաջգային հիմնադրամը և Համաշխարհային բանկը՝ նշելով, որ սա համաշխարհային տնտեսական ճգնաժամի հետևանքով առաջացած մարտահրավերներին համեմատաբար անցավ արձագանքելու միակ ճիշտ

ճանապարհին էր: Ավելին, հռչակավոր **Bloomberg** կազմակերպությունը հայտարարել էր, որ նման իրավիճակում հայտնված երկրները հարկ է, որ ընդօրինակեն Հայաստանից: Ուշագրավ է, որ հիշյալ միջոցառման արդյունքում չի փոխվել նաև Հայաստանի ներդրումային վարկանիշը. ըստ **Fitch** վարկանիշային հեղինակավոր կազմակերպության, այն մնացել է **BB** մակարդակում՝ առավելագույնը **BB+** պարագայում, ինչը խոսում է Հայաստանի ամուր դիրքերի և ներդրողների կողմից գրավչության կայուն մակարդակի մասին: Հավելենք, որ ազգային արժույթի թուլացումը լավ հնարավորություն է ստեղծում արտահանողների համար, որոնք դրամի շարունակական արժեվորման պատճառով վերջին տարիներին ոչ բարենպաստ պայմաններում էին: Այս ամենը խոսում է հոգուտ կառավարության խելամիտ և կշռված քաղաքականության, որի արդյունքում այս դժվարին պայմաններում հնարավոր է դարձել պահպանելու մակրոտնտեսական կայունությունը:

Հակաճգնաժամային քաղաքականության սկզբունքները

8. Հաշվի առնելով ՀՀ տնտեսության վրա համաշխարհային ճգնաժամի ունեցած ազդեցությունը, ՀՀ կառավարության կողմից իրականացվող հակաճգնաժամային քաղաքականության արձագանքը ուղղված է ոչ թե ֆինանսական ինստիտուտների հզորացմանը և հնարավոր ռիսկերից լրացուցիչ ապահովագրմանը, այլ հիմնականում տնտեսական ակտիվության խթանմանը: Հակաճգնաժամային քաղաքականության հիմնական սկզբունքներն են.

- Ֆինանսական կայունության միջոցով մակրոտնտեսական կայունության ապահովում,
- փոխարժեքի արդյունավետ քաղաքականության իրականացում,
- հասարակության և բիզնեսի հետ արդյունավետ հաղորդակցության ապահովում,
- ընդլայնող դրամավարկային և հարկաբյուջետային քաղաքականության իրականացում,
- ենթակառուցվածքներին ուղղված լայնածավալ ծրագրերի իրականացում,

- գործարար միջավայրի բարելավում եւ գործարարությանը ժամանակավոր աջակցության տրամադրում,
- սոցիալական ուղղվածություն ունեցող ծրագրերի իրականացման առաջնահերթություն:

Մակրոտնտեսական քաղաքականություն

9. Ներկայումս ՀՀ կառավարության և ՀՀ ԿԲ-ի կողմից իրականացվող հարկաբյուջետային և դրամավարկային քաղաքականությունը հակացիկլիկ է, այն է՝ տնտեսության անկմանը հակազդելու համար ընդլայնում է ամբողջական պահանջարկը՝ նպաստելով գործարար միջավայրի աշխուժացմանը: Այս գործընթացում խիստ կարևորվում է հիշյալ քաղաքականության արդյունավետ համակարգումը, ինչը, կարծում ենք, հաջողությամբ իրագործվում է ներկայումս: Մասնավորապես, բանկերի ֆինանսական ռեսուրսները համալրելու, տնտեսության մեջ լրացուցիչ լիկվիդայնություն ներարկելու նպատակով, որը կրեբի տոկոսադրույքների նվազմանը, ՀՀ ԿԲ-ն մայիսի վերջին **1.0** տոկոսային կետով իջեցրեց վերաֆինանսավորման տոկոսադրույքը՝ սահմանելով այն **6.25%**, իսկ ներգրավված ավանդների եւ լոմբարդային վարկերի տոկոսադրույքները սահմանվեցին համապատասխանաբար՝ **3.25%** և **9.25%**: Մյուս կողմից ԿԲ-ն ընդլայնեց միջոցների ներարկման դրամավարկային գործիքակազմը, որը ներառում է.

Երկարաժամկետ ռեպո գործառնությունները.

- ժամկետայնությունը՝ **91** օր
- հաճախականությունը՝ ամսական
- տոկոսադրույքը՝ ֆիքսված (վերաֆինանսավորման տոկոսադրույք + մարժային տոկոսադրույք)
- ծավալը՝ անսահմանափակ (երկարաժամկետ ռեպո գործառնության ծավալը պետք է լինի այնքան, որ հիմնական ռեպո գործառնության ծավալը չնվազեցնի **20** մլրդ. դրամից)

Պետական պարտատոմսերի առք՝ հետևյալ պայմաններով.

- Ժամկետայնությունը՝ բոլոր ժամկետայնության պարտատոմսեր, սակայն առավել մեծ ծավալի գործարքներ պետք է իրականացվեն այն ժամկետայնության պարտատոմսերով, որոնց եկամտաբերությունը առավել բարձր է,
- հաճախականությունը՝ ոչ կանոնավոր
- տոկոսադրույքը՝ տատանվող (սակարկվող)
- ծավալը՝ հիմնական ներարկման գործիք դիտարկել երկարաժամկետ ռեպո գործիքը, մինչև ժամանակ պարտատոմսերի առթի ծավալը պետք է լինի այնքան, որ հիմնական ռեպո գործառնության ծավալը չնվազեցնի **20** մլրդ. դրամից

Արտարժույթի տրամադրման սվոփի կանոնները.

- Ժամկետայնությունը՝ մինչև **7** օր
- հաճախականությունը՝ ոչ կանոնավոր
- տոկոսադրույքը՝ ֆիքսված (սվոփ տոկոսադրույքը պետք է հավասար լինի երկարաժամկետ ռեպո գործառնության տոկոսադրույքին)
- ծավալը՝ ոչ կանոնավոր

Համակարգային գործիքների կիրառում.

- Բանկի բաժնետերերի կողմից կապիտալի համալրման դեպքում համալրման գումարի չափով բանկերին **5** տարի ժամկետով սուբորդինացված վարկերի տրամադրում
- Բանկերի միաձուլումների դեպքում **3** տարի ժամկետով վարկերի տրամադրում մինչև կապիտալի **30%**-ը:

10. 2009թ. առաջին եռամսյակում հարկաբյուջետային քաղաքականությունն ուղղված է եղել համախառն պահանջարկի ընդլայնմանը: Հարկաբյուջետային ազդակի ցուցանիշը հաշվետու եռամսյակում կազմել է **5.8** տոկոս ընդլայնող, ընդ որում՝ եկամուտների ազդակը՝ **8.2** տոկոս զսպող, իսկ ծախսերի ազդակը՝ **14** տոկոս ընդլայնող: Եկամուտների ազդակի զսպող ազդեցությունը հիմնականում պայմավորված է

պարտադիր սոցիալական ապահովագրության վճարների կայուն բարձր մակարդակի պահպանմամբ և ոչ հարկային եկամուտների հավաքման բարձր մակարդակով: Մասնավորապես, ՀՆԱ-ի նկատմամբ սոցիալական ապահովագրության վճարների մակարդակը **2009թ.** առաջին երեք ամիսներին կազմել է **4.6** տոկոս՝ պետական բյուջեի մասին օրենքով նախատեսված **3.1** տոկոսի փոխարեն: Ոչ հարկային եկամուտների գծով փաստացի մուտքերը կազմել են ավելի քան **9** մլրդ դրամ՝ **3** անգամ գերազանցելով առաջին եռամսյակի համար նախատեսված մակարդակը: Ծախսերի ընդլանդ ազդեցությունը պայմանավորված է այն հանգամանքով, որ չնայած **6.1** տոկոս տնտեսական անկմանը, պետական բյուջեի ծախսերը, մասնավորապես, սոցիալական ծախսերն ու աշխատավարձի վճարումները կատարվել են օրենքով նախատեսված ծավալով՝ արդյունքում ապահովելով ՀՆԱ-ի նկատմամբ առավել բարձր մակարդակ: Մասնավորապես, ընդամենը ծախսերը առաջին եռամսյակի տվյալներով կազմել է ՀՆԱ-ի **35.4** տոկոսը, այն դեպքում, երբ պետական բյուջեի մասին օրենքում ծախսեր/ՀՆԱ նպատակային ցուցանիշը նախատեսված է **22.7** տոկոս:

Հարկային և մաքսային բարեփոխումներ

- 11.** Հարկային բնագավառում իրականացվող բարեփոխումների հենքն է Հայաստանի Հանրապետության հարկային վարչարարության ռազմավարության **2008-2011թթ.** ծրագիրը, որի գաղափարախոսական հիմքը «դեմքով դեպի հարկատուն» կարգախոսն է: Ծրագրով իրականացվել են հետևյալ կարևոր միջոցառումները, որոնք ունեն հակաճգնաժամային բնույթ:
 - 12.** Գործարար աշխարհի համար, մասնավորապես, ՓՄՁ-ի, էապես հեշտացվել են հարկային վարչարարության կանոնները, որոնք նախատեսում են.
 - ԱԱՀ հարկման շեմի բարձրացում մինչև **58.3** մլն դրամ՝ գործող **3** մլն դրամի փոխարեն, ինչպես նաև փոքր և միջին ձեռնարկությունների հարկային հաշվետվության պարզեցում. մինչև **100** մլն. դրամ շրջանառություն ունեցող ձեռնարկությունների համար հաշվապահական հաշվառման վարումը

հարկային հաշվառման կանոնակարգերով՝ միջազգային չափանիշների կիրարկման փոխարեն:

- Մինչև **58.35** մլն դրամ շրջանառություն ունեցող հարկ վճարողները շահութահարկի եւ եկամտահարկի ընդհանուր սահմանված կարգով հաշվարկում եւ տարեկան մեկ անգամ շահութահարկի եւ եկամտահարկի պարզեցված հաշվարկ են ներկայացում,
- մինչև **5** աշխատող ունեցող գործատուների կողմից եռամսյակային հաշվետվություն (նախկինում ամսականի փոխարեն) ներկայացում,
- ՀԴՄ կտրոններով և կրճատ հաշիվ ապրանքագրերով ծախսերը հիմնավորող փաստաթղթի ընդունում տարեկան **36** մլն դրամի չափով՝ գործող **1** մլն դրամ սահմանաչափի փոխարեն,
- Հարկային հաշվետվությունների ընդունման գործընթացի պարզեցում, նախկինում գործող հանձնաժողովների լուծարում և փոստով կամ SՏՏ տեղադրված արկղերի միջոցով հաշվետվությունների ընդունման պրակտիկայի, ինչպես նաև ս.թ. հոկտեմբերից հարկային հաշվետվությունները էլեկտրոնային եղանակով հարկային մարմին ներկայացնելու մեխանիզմի ներդրում: Այս ամենը նվազագույնի է հասցնում հարկատու-հարկային տեսուչ ֆիզիկական շփումը՝ էապես «հեշտացնելով հարկատուի կյանքը» և նվազեցնելով կոռուպցիոն ռիսկերը:
- ԱԱՀ ամսական հաշվետվությունների ներկայացման պահանջի վերացում՝ եթե շրջանառությունը փոքր է **100** մլն դրամից՝ նախկին **60** մլն փոխարեն: Վերոհիշյալ կետերում նշված միջոցառումները էապես կխնայեն գործարարների «թանկարժեք» ժամանակը և կնվազեցնեն հարկային մարմինների հետ շփման գործարքային ծախքերը:
- ՓՄՁ համար «Հաշվապահական ծառայությունների կենտրոն»-ի բացում, որը հնարավորություն է ընձեռում տվյալ խմբի հարկատուների համար միասնական քաղաքականություն իրականացնել, ինչպես նաև վերջիններիս համար ստանդարտացված որակյալ և մատչելի ծառայություններ մատուցել:

- Ձեռագործ գորգագործությունը ԱԱՀ-ից և շահութահարկից ազատում, ինչը նպաստում է ճյուղի ոչ միայն ֆինանսական ցուցանիշների բարելավմանը, այլ նաև ազգային կարևորագույն ավանդույթի պահպանմանը:
- «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի **6¹** հոդվածում նշված ապրանքախմբերի ներմուծման ժամանակ ԱԱՀ վճարման հետաձգում մինչև **3** տարի ժամկետով՝ եթե այն գերազանում է **300** մլն դրամը: Նույն պայմանը կիրառվում է նաև հիշյալ ցանկում չընդգրկված այն ապրանքախմբերի նկատմամբ, որոնք նախատեսված են կառավարության հավանությանն արժանացած **300** մլն. դրամ և ավելի արժողություն ունեցող ներդրումային ծրագրերում:
- «Արտոնագրային վճարների մասին» օրենքով **11** տեսակի գործունեության մասով (հիմնականում ինքնագրադրվածների) արտոնագրային վճարի սահմանում, ինչը նոր խաղի կանոններ է սահմանում հիշյալ բնագավառներում պետության հետ հարաբերությունների առումով՝ ինքնագրադրվածներին հնարավորություն տալով հարկային վարչարարության համատեքստում ավելի «ապահով» և «շահավետ» գործունեություն ծավալելու:
- Որակավորում չստացած հյուրանոցային տնտեսության օբյեկտների հարկման կարգի պարզեցում և հարկման հաստատագրված վճարների սահմանում ըստ գոտիականության, ինչը հնարավորություն կտա ձևավորելու համեմատաբար մատչելի հյուրանոցային ծառայությունների ցանցը, որն էլ իր հերթին կարող է հանդիսանալ զբոսաշրջության զարգացման լրջագույն խթան:
- Տուրիզմի զարգացման և զբոսաշրջիկների համար Հայաստանի գրավչությունը բարձրացնելու նպատակով կարճաժամկետ (**21** օր) այցելությունների համար **15** հազ. դրամից մինչև **3** հազ. դրամ կրճատվել է պետական տուրքը:
- ՀՀ կառավարությունը որոշում է կայացրել **2009թ.** երկրորդ եռամսյակում իրականացնել ԱԱՀ-ի գերավճարների շուրջ **15** մլրդ. դրամի վերադարձը, ինչը լրջորեն կհամալրի գործարարների ֆինանսական ռեսուրսները և հետագա գործունեության արդյունավետ ծավալման խթան կհանդիսանա:

- Ոսկերչության և ադամանդագործության բնագավառում վերացվել է շահութահարկի գծով շրջանառության 1%-ի կանխավճարի պարտադիր մուծման դրույթը, ինչը լրացուցիչ ազատ ֆինանսական ռեսուրսներ է ստեղծում գործարարների համար:
- Տեսչական ստուգումների իրականացման մասով ՀՀ կառավարությունը աննախադեպ քայլի է գնացել` 2009թ. հունիսի 1-ից մինչև 2011թ. հունվարի 1-ը տեսչական ստուգումների չեն ենթարկվի այն տնտեսվարող սուբյեկտները (բացառությամբ ՀՀ ՊԵԿ-ի կողմից), որոնց մոտ 2008թ. շրջանառությունը չի գերազանցել 70 մլն. դրամը (բացառությամբ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով նախատեսված դեպքերի, անձանց իրավունքների, կյանքի եւ առողջության պաշտպանության, պետության պաշտպանության և անվտանգության ապահովման դեպքերի` միայն ՀՀ վարչապետի գրավոր համաձայնությամբ, ՓՄՁ ղեկավարի գրավոր դիմումի հիման վրա, ՓՄՁ սուբյեկտը լուծարելիս):

13. Մաքսային բնագավառում իրականացվել են հետևյալ կարևոր բարեփոխումները.

- Մաքսատներում և մաքսային պահեստներում բացվել են մաքսային բրոքերի, ինչպես նաև ինքնահայտարարագրման գրասենյակներ, որոնք էլեկտրոնային կապուղիներով միացված են մաքսատներում և մաքսային պահեստներում գործարկվող «TWM» մաքսային ձևակերպումների համակարգչային ծրագրին: Սույն միջոցառման արդյունքում կրճատվել է մաքսային ձևակերպումների ժամանակը, նվազագույնի է հասցվել ներմուծող-մաքսային ծառայող ֆիզիկական շփման աստիճանը` նվազեցնելով կոռուպցիոն ռիսկերը:
- Պարզեցվել են մաքսային ընթացակարգերը` ավելացնելով դրույթներ, որոնց համաձայն հետբացթողումային հսկողության արդյունքում հայտնաբերված անճշտությունների դեպքում ոչ թե նախկին հայտարարագիրը անվավեր է ճանաչվում, այլ դրանում կատարվում են համապատասխան ճշգրտումներ: Այս պարագայում ներմուծողը զերծ է մնում ավելորդ ժամանակի և ջանքերի կորստից:

- Վերանայվել են **TWM** մաքսային ձևակերպումների համակարգչային ծրագրում ռիսկերի ընտրողականության չափանիշները, որի հիմնական նպատակն է բարձրացնել մաքսային հսկողության արդյունավետությունը՝ այն դարձնելով առավել թիրախային և ռեսուրսախնայող:
- Կրճատվել է ՀՀ մաքսային սահմանով իրականացվող ներկրման և արտահանման համար պահանջվող փաստաթղթերի քանակը՝ այն հասցնելով երեքի: Սա էապես կնվազեցնի ներկրման և արտահանման գործընթացների ձևակերպման ժամկետը:
- Կրճատվել է ներմուծման պահին պարտադիր սերտիֆիկացման ենթակա ապրանքների ցանկը՝ պարտադիր սերտիֆիկացման ենթակա ապրանքատեսակների թիվը **65**-ից հասցնելով մինչև **16**, ինչը բյուրոկրատական քաշքշուկի դաշտում էականորեն կրճատում է գործարարների ժամանակը:
- Հանվել է մաքսային մարմինների կողմից լրացվող մաքսավճարի անդորրագրի ձևը՝ ներկայումս այն վճարվում է միայն բանկային համակարգի միջոցով, ինչն էապես նվազեցնում է մաքսային ծառայողների կողմից հնարավոր կոռուպցիոն դրսևորման հնարավորությունները:

Գործարար միջավայրի բարելավում

14. Հայաստանը, որպես «տարածաշրջանում գործարարությամբ զբաղվելու լավագույն երկիր» նկարագրի ձևավորման և «Գործարարությամբ զբաղվելը» (**Doing Business**) հաշվետվության մեջ լավագույն երկրների շարքում դասվելու նպատակով, ՀՀ կառավարությունը **2008**թ. ընդունել է «Հայաստանի գործարար և ներդրումային միջավայրի «Գերազանցության կենտրոն» համազգային նախագծի» հայեցակարգը, որի իրականացման համար հաստատվել է «Հայաստանի գործարար միջավայրի բարելավման միջոցառումների» ծրագիրը: Կատարվել են մի շարք բարեփոխումներ (ի թիվս հարկային և մաքսային ոլորտներում իրականացված բարեփոխումների), մասնավորապես.

15. Մշակվել են «Անշարժ գույքի հարկի մասին», «Փոխադրամիջոցների գույքահարկի մասին» և «Եկամտային հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերը, որոնք նախատեսում են հողի և անշարժ գույքի գույքահարկերի փոխարեն մեկ միասնական հարկ, եկամտահարկի և սոցիալական ապահովության հարկերի փոխարեն մեկ եկամտային հարկ, արդյունքում նաև այս հարկատեսակների մեկական հաշվետվության ձևեր:

16. Պարզեցվել է իրավաբանական անձ ստեղծելու գործընթացը.

- հանվել է կնիք ունենալու պարտադիր պահանջը,
- կնիք ունենալու ցանկության դեպքում հանվել է կնիք պատվիրելու թույլտվության պահանջը,
- չի սահմանվում նվազագույն կանոնադրական կապիտալի չափը և գրանցվելիս դրա մասին տեղեկություն ներկայացնելը պարտադիր չէ,
- գրանցման ժամանակ կանոնադրություն ներկայացնելիս դրա գրանցող մարմնի կողմից բովանդակությունը չի ստուգվում, այլ միայն գրանցվում, հաշվառվում է:

17. Նախատեսվում է իրավաբանական անձանց գրանցման պետական ռեգիստրի հենքի վրա ստեղծել «Բիզնեսի աջակցման կենտրոն», որը «մեկ պատուհանի, մեկ կանգառի» /one stop shop/ սկզբունքով կմատուցի ընկերության ստեղծման հետ կապված բոլոր ծառայությունները, այդ թվում՝ ֆիրմային անվանման և հարկ վճարողի հաշվարկային հաշվի տրամադրման գործառույթները:

18. Շինարարության թույլտվության բնագավառում.

- մշակվում է ճարտարապետահատակագծային առաջադրանքը (Ըկի) ձևավորելու փուլում կառուցապատողների կողմից տեխնիկական պայմանների ստացման (կոմունալ ծառայությունների միացման) համար «Մեկ պատուհանի» համակարգի ներդրման հետ կապված օրենսդրական փոփոխությունների փաթեթ:

19. Վարկերի ստացման նպատակով.

- վարկային տեղեկատվության շրջանառության և դրա հավաքման հետ կապված հարաբերությունների կարգավորման նպատակով ընդունվել է «Վարկային տեղեկատվության շրջանառության և վարկային բյուրոների գործունեության

մասին» ՀՀ օրենքը: Արդյունքում կկրճատվի բանկերի ռիսկայնության աստիճանը վարկավորման գործընթացում՝ էապես բարձրացնելով բանկերի գործունեության արդյունավետությունը:

20. Սեփականության գրանցման բնագավառում.

- մշակվել է Հայաստանի Հանրապետությունում անշարժ գույքի կադաստրի վարման համակարգի ավտոմատացման ծրագիր, ինչը կբերի հաճախորդների սպասարկման ժամանակահատվածի կրճատմանը, օպերատիվ կարգով տեղեկատվության ստացմանը և տրամադրմանը, ինչն էլ իր հերթին կնպաստի ամբողջ համակարգի արդյունավետության բարձրացմանը:

Ենթակառուցվածքներ

21. Գյուղական ճանապարհների վերականգնման համար Ասիական զարգացման բանկը տրամադրել է շուրջ **48** մլն. ԱՄՆ դոլար վարկ: Շինարարական աշխատանքները սկսվել են **2008**թ. հոկտեմբերին, դրանք կշարունակվեն և կավարտվեն **2009-2010**թթ.:

22. «Հազարամյակի մարտահրավեր» ծրագրով իրականացվել է շուրջ **5.3** մլրդ դրամի աշխատանք, որից Արմավիր-Իսահակյան-Գյումրի ավտոճանապարհի **24.5** կիլոմետրանոց **1.5** մլրդ դրամ արժեքով հատվածը հանձնվել է շահագործման:

23. **2008**թ. հոկտեմբերին վրացական կողմի հետ պայմանավորվածություն է ձեռք բերվել վերակառուցել Երևան-Բաթում ավտոճանապարհը, ինչը մոտ **30%**-ով կկրճատի ներկայիս գործող ճանապարհը, կնպաստի բեռնափոխադրումների ծավալների ավելացմանը և զբոսաշրջության զարգացմանը :

24. Համապատասխան աշխատանք է տարվել հանրապետության համար ռազմավարական նշանակություն ունեցող այլընտրանքային հաղորդակցության ուղիների ստեղծման, մասնավորապես Հայաստան-Իրան երկաթգծի կառուցման ուղղությամբ: Բանակցություն է վարվել հնարավոր ներդրողների հետ, կազմվել երկաթգծի կառուցման նախագծի երեք տարբերակ: Նախագծի իրականացման աշխատանքը շարունակվում է:

25. Աշխատանք է տարվել նոր միջուկային էներգաբլոկի կառուցման և ուրանի արդյունահանման ու վերամշակման նպատակով, ինչը էներգետիկ անվտանգության և

աշխարհաքաղաքական տեսանկյունից հույժ կարևոր նշանակություն ունի Հայաստանի համար.

- Արդեն իսկ ավարտվել է Կառավարող ընկերության ընտրության համար հայտարարված մրցույթը, որում հաղթող ճանաչվեց տվյալ բնագավառում մեծ փորձ ունեցող **Warley Parsons** ընկերությունը: Այն կաշակցի ՀՀ կառավարությանը՝ ապահովելու նախագծի իրականացման համար անհրաժեշտ բոլոր գործողությունները և Ռազմավարական ներդրող(ներ)ի ընտրության հարցում,
- Մշակվել է ՀՀ-ում ուրանի հանքանյութի հետախուզման «Երկրաբանահետախուզման աշխատանքներ, 2009-2010թթ.» փաստաթուղթը, համաձայն որի **2009**թ. գարնանը կսկսվեն ուրանի հանքանյութի հետախուզման դաշտային աշխատանքերը:

26. Էլեկտրաէներգետիկայի ոլորտում իրականացվել են հետևյալ համակարգային նշանակության աշխատանքները.

- Մեկնարկել են շինարարահավաքակցման աշխատանքները Ճապոնիայի ՄՀՃԲ կողմից ֆինանսավորվող վարկային ծրագրերում, այդ թվում՝ «Երևանի ՋԷԿ-ում համակցված ցիկլով շոգեգազային կայանի կառուցում» ծրագրով իրականացվել են հիմնական շինությունների հիմքերի բետոնապատման աշխատանքները և «Էլեկտրահաղորդման և բաշխիչ համակարգեր» ծրագրի **110** կՎ ենթակայանների և **SCADA/կապի** համակարգի բաղադրիչներում սկսվել են նախագծման աշխատանքները: ՋԷԿ-ի կառուցումը հնարավորություն կտա էապես մեծացնել մատակարարվող էլեկտրաէներգիայի ծավալը՝ միննույն ժամանակ կրճատելով վերջինիս ինքնարժեքը:
- Շարունակվում են Հրազդանի 5-րդ էներգաբլոկի վերակառուցմանն ուղղված գործողությունները, որոնք իրականացվում են «Հայֆուսգազարդ» ՓԲԸ կողմից:
- **2009**թ. հունվարի **30**-ին ՀՀ ֆինանսների նախարարության, **KfW** գերմանական բանկի և Հայաստանի բարձրավոլտ էլեկտրացանցեր ՓԲԸ-ի միջև ստորագրվեց Վարկի տրամադրման և ծրագրի ֆինանսավորման պայմանագիր, որի համաձայն Գյումրի-2 բարձրավոլտ ենթակայանի վերակառուցման նպատակով բյուջետային և

շուկայական միջոցների խառը ֆինանսավորման տեսքով հատկացվում է մինչև **14.6** միլիոն եվրո:

27. Վերականգնվող էներգետիկայի և էներգախնայողության ոլորտներում.

- Վերակառուցման ու զարգացման միջազգային բանկի կողմից հաստատվել է **1.5** մլն.ԱՄՆ դոլար դրամաշնորհը՝ երկրաջերմային երկու ընտրված ծրագրերի համար երկրաբանական և երկրաֆիզիկական հետազոտություններ իրականացնելու նպատակով: Այդ հետազոտությունների դրական արդյունքի դեպքում հնարավոր կլինի սկսել երկրաբանական հետախուզական աշխատանքները,
- Գերմանական **KfW** բանկի ֆինանսավորմամբ հաջողությամբ շարունակվում է փոքր ՀԵԿ-երի վարկավորման գործընթացը: Գերմանա-Հայկական հիմնադրամի կողմից վարկավորվել են **11** ՓՀԵԿ-եր, իսկ ՀԲ-ի ֆինանսավորմամբ «Վերականգնվող էներգետիկայի և էներգախնայողության հիմնադրամի» կողմից՝ **23** ՓՀԵԿ-եր,
- ՀՀ կառավարության և ԻԻՀ կառավարության միջև Արաքս գետի հիդրոէներգետիկ ներուժի ուսումնասիրության նախագծի շրջանակում ստորագրվել է ՀՀ և ԻԻՀ սահմանային երթևեկության դյուրացման կանոնակարգը և ներկայացվել ՀՀ ԱԺ վավերացմանը: Մեղրիի ՀԵԿ-ի կառուցման համար անհրաժեշտ ֆինանսական սխեմայի ճշգրտման նպատակով շարունակվում է բանակցությունը ԻԻՀ հետ:

28. Կառավարությունը իրանական կողմի հետ բանակցում է Իրանից Հայաստան (Թավրիզ-Երասխ) նավթատարի կառուցման վերաբերյալ, որը հավանաբար կսկսվի այս տարվա ընթացքում: Նավթատարը հիմնականում միտված է ներքին շուկայի պահանջների բավարարմանը, և տարեկան փոխադրելու է **450-500** հազ. տոննա նավթ: Այս նախագիծը ևս հույժ կարևոր է Հայաստանի տնտեսության համար, քանի որ վառելիքի մատակարարման այլընտրանքային ճանապարհ է ստեղծում, ինչը կնպաստի գների անկմանը և մեծապես տնտեսությունը զերծ կպահի արտաքին հնարավոր ցնցումների բացասական ազդեցությունից:

Շինարարություն

- 29.** ՀՀ կառավարությունը մշտական ուշադրության կետրոնում է պահում աղետից տուժած և սոցիալապես անապահով քաղաքացիների հիմնախնդիրները: Երկրաշարժի հետևանքով անօթևան մնացած ընտանիքների խնդիրների լուծմանն ուղղված բնակարանային շինարարության իրականացման ծրագրի շրջանակում կազմակերպվել և կայացել են Գյումրի քաղաքի Անի և Մուշ-2 թաղամասերում առնվազն **2300** բնակարանի և սպասարկման օբյեկտի, ՀՀ Շիրակի մարզի Ախուրյան գյուղում` **182** բնակարանի և սպասարկման օբյեկտի, ՀՀ Շիրակի մարզի **10** գյուղական բնակավայրերում առնվազն **226** անհատական բնակելի տների, ՀՀ Լոռու մարզի Սպիտակ քաղաքում` առնվազն **354** բնակարանի և սպասարկման օբյեկտի/արհեստագործների թաղամասի ստեղծումով/ և ՀՀ Լոռու մարզի **24** գյուղական բնակավայրերում առնվազն **1821** անհատական բնակելի տների կառուցման մրցույթները:
- 30. 2008թ.** դեկտեմբերին կայացել է ՀՀ Վայոց ձորի մարզի Ջերմուկ քաղաքի չգործող օդանավակայանի տարածքում առաջնահերթ կառուցապատման սխեմաների նախագծերի մշակման մրցույթը: Նախագծային աշխատանքները ընթացքում են: Ծրագրի շրջանակում նախատեսվում է մշակել քաղաքի կառուցապատման սխեման և քաղաքաշինական կանոնադրությունը:
- 31.** Մշակվում է Գյումրի քաղաքի պատմամշակութային և քաղաքաշինական միջավայրի վերականգնման և զարգացման /Կումայրի/ ծրագիրը: Ծրագրի նպատակն է Գյումրի քաղաքի պատմական կառուցապատման քաղաքաշինական վերականգնման, գոյություն ունեցող ոճին հարազատ որոշ հատվածների կառուցապատման ու ճարտարապետական փոքր ձևերի վերականգնման միջոցով ապահովել պատմական կենտրոնի պահպանումը, ինչպես նաև նպաստել ավանդական արհեստագործության վերականգնմանը, փոքր և միջին բիզնեսի, տուրիզմի զարգացման և ներդրումների համար բարենպաստ պայմանների ու նոր աշխատատեղերի ստեղծմանը:
- 32.** Ազգային մրցունակության խորհրդի գործունեության շրջանակում տուրիզմի զարգացման նպատակով իրականացման փուլում է Տաթևի վանական համալիրի վերականգնման և տարածաշրջանի գրավչությունը բարձրացնելու համապարփակ ծրագիրը: Ծրագրի արժեքն է **20** մլն. դոլար, և այն ֆինանսավորվելու է սփյուռքահայ

գործարարների միջոցով: Ծրագրի շրջանակում նախատեսվում է կառուցել Հայաստանում նմանը չունեցող ճոպանուղի, որն ըստ փորձագետների լինելու է աշխարհում ամենաբարձրերից և ամենաերկարներից մեկը:

- 33.** ՀՀ կառավարությունը ձեռնամուխ է եղել շինարարական ոլորտի աշխուժացմանը՝ հաշվի առնելով վերջինիս խիստ կարևոր դերը երկրի ՀՆԱ-ի ձևավորման գործում: Այդ նպատակով նախ և առաջ պետական երաշխիքներ են ներկայացվում այն կառուցապատողներին, որոնց բազմաբնակարան անավարտ շինություններն ունեն **50%** և ավելի ավարտվածության աստիճան: Հաջորդ նախաձեռնությամբ ՀՀ կառավարությունը ձեռնամուխ է եղել նոր օրենքի մշակմանը, ըստ որի նախատեսվում է սուբսիդավորել ՀՀ-ում **2009-2011թթ. 1** մլրդ. դրամ և ավելի արժողությամբ հանրային բնույթի նոր շինարարության գործընթացը՝ շինարարության ավարտից հետո կառուցապատողին վերադարձնելով ընթացքում պետական բյուջե վճարած ԱԱՀ-ի և սոցիալական վճարի ամբողջ ծավալը:
- 34.** Շինարարության ոլորտի աշխուժացման, ինչպես նաև բնակչության սոցիալական հիմնախնդիրների լուծման նպատակով ՀՀ կառավարությունը մտադիր է հիմնել հիպոթեքային հիմնադրամ, որը կլինի պետություն- մասնավոր համագործակցության հիմքի վրա: Ակնկալվում է, որ պետական մասնակցությունը կլինի **20** մլն. դոլարի չափով, ինչը հետագայում հնարավորություն կընձեռի բնակչությանը հիպոթեքային վարկեր տրամադրելու նպատակով ներգրավել **200-300** մլն. դոլար:

Աջակցություն իրական հատվածին

- 35.** Տնտեսության իրական հատվածի զարգացմանն ուղղակիորեն նպաստելու նպատակով ձևավորվել է Օպերատիվ շտաբ, որը քննարկում է մասնավոր հատվածից ստացված բիզնես նախագծերը, ինչպես նաև որոշում աջակցության ձևաչափը: Մինչ օրս Օպերատիվ շտաբի կողմից ստացված գործարար ծրագրերի ընդհանուր թիվը հասնում է մոտ **300**-ի: Օպերատիվ շտաբի կողմից դրական ընթացք է ստացել **14.1** մլրդ դրամ արժողությամբ **24** նախագիծ:
- 36.** Մինչև այժմ ՓՄՁ ԶԱԿ-ի կողմից տրամադրվել է **50** մլն դրամի աջակցություն՝ կանոնադրական կապիտալում մասնակցության տեսքով և **12** մլն դրամի և **110** հազ.

ԱՄՆ դուլար աջակցություն՝ վարկավորման տեսքով: Բացի վերոնշյալ ծրագրերից, Աշխատանքային խմբում կայացած քննարկումների արդյունքում ՓՄՁ ՋԱԿ են վերահասցեագրվել **16** գործարար ծրագրեր, որոնց աջակցություն տրամադրելու հարցն ընթացքի մեջ է:

- 37.** ՀՀ ՓՄՁ ՋԱԿ-ին կից ստեղծվել է հատուկ վարկային/ներդրումային կազմակերպությունը, որը ՌԴ-ից ստացված **500** մլն. դուլար վարկային ռեսուրսի հաշվին (մոտ **15** մլրդ.դրամ) ինչպես վարկավորելու է ՀՀ տնտեսության զարգացման համար կարևոր նշանակություն ունեցող գործարար նախագծերը, այնպես էլ մասնակցություն է ունենալու ընկերությունների կապիտալում: Վարկային ռեսուրսների համատարած թանկության պայմաններում այս նախաձեռնությունը կհանդիսանա տնտեսության, հատկապես ՓՄՁ-ի զարգացման լուրջ խթան:
- 38.** Ռուսաստանից ներգրավված վարկային ռեսուրսի հաշվին կստեղծվի նաև Կայունացման հիմնադրամ, որը տնտեսությունը կապահովագրի համաշխարհային ճգնաժամով պայմանավորված հնարավոր ցնցումներից:
- 39.** ՓՄՁ-ի վարկավորման համար օգտագործվում են նաև միջազգային ֆինանսական ինստիտուտների միջոցները: Այսպես, ՀԲ-ի տրամադրած **85** մլն. դուլար վարկից **50** մլն դուլարը արդեն իսկ ուղղվել է ՓՄՁ զարգացմանը, իսկ մնացած գումարը կտրամադրվի ճանապարհաշինարարությանը:
- 40.** Հայաստանին ադամանդագործության զարգացման համար **100** մլն. դուլար վարկի տրամադրման ուղղությամբ ՀՀ կառավարությունը բանակցում է ռուսական “АЛПОСА” ընկերության հետ: Սա հնարավորություն կընձեռի վերականգնելու և նոր թափ հաղորդելու Հայաստանում լավագույն ավանդույթներ ունեցող, սակայն վերջին տարիներին օբյեկտիվ պատճառով անկում ապրած այս ճյուղին:
- 41.** ՀՀ Ազգային ժողովն ընդունել է Համահայկական բանկի մասին օրենքը, որը սահմանում է բանկի գործունեության իրավական և ինստիտուցիոնալ հիմքերը: Համահայկական բանկը լինելու է այն ռազմավարական կառույցներից մեկը, որի միջոցով համազգային ծրագրերի իրականացման նպատակով համախմբվելու են աշխարհասփյուռ հայերի ջանքերն ու կարողությունները:

Սոցիալական ծրագրեր

42. ՀՀ կառավարությունը հայտարարել է «Երիտասարդներին՝ մատչելի բնակարան» պետական նպատակային ծրագրի մեկնարկի մասին, որի հիմնական նպատակն է սոցիալապես անապահով ընտանիքների աջակցությունը: Ծրագրով նախատեսվում է իրականացնել պետական օժանդակություն երիտասարդ ընտանիքներին՝ հիպոթեքային վարկավորման միջոցով բնակարան ձեռք բերելու նպատակով: Նշված օժանդակությունը նախատեսվում է իրականացնել հետևյալ երկու ուղղություններով.

- պետության կողմից **10-15** տարի մարման ժամկետով անտոկոս փոխառության տրամադրում՝ հիպոթեքային վարկի կանխավճարի համար պահանջվող գումարի **30** տոկոսի չափով, իսկ երիտասարդ ընտանիքում անչափահաս երեխաների առկայության դեպքում՝ յուրաքանչյուր երեխայի համար՝ ևս տասը տոկոս:

- պետության կողմից հիպոթեքային վարկի տոկոսադրույքի մասնակի սուբսիդավորում: Երիտասարդ ընտանիքում անչափահաս երեխաների առկայության դեպքում յուրաքանչյուր երեխայի հաշվարկով կսուբսիդավորվի ևս տասը տոկոս՝ մինչև նրա չափահաս դառնալը:

Արտաքին տնտեսական քաղաքականություն

43. Եվրամիության հետ տնտեսական կապերի ամրապնդման գործում հույժ կարևոր է Հայաստանի անդամակցությունը Եվրամիության **GSP+** համակարգին, ինչը հնարավորություն կտա մեր արտահանողներին արտոնյալ պայմաններով ապրանքներ ներմուծել Եվրամիության շուկա, որի շնորհիվ կրճատվում են վերջիններիս արտահանման ծախսերը և բարձրանում մրցունակությունը ԵՄ շուկայում:

Կրթություն և գիտություն

44. Հայաստանի կառավարությունը քաջ գիտակցում է գիտության զարգացման կարևորությունը կայուն տնտեսություն և առաջադեմ հասարակություն ունենալու գործում, ինչի վառ ապացույցն են վերջերս ընդունված երկու որոշումները: Առաջինը վերաբերում է «Քենդլ» սինքրոտրոնային լույսի աղբյուրի նախագծի հիման վրա

միջազգային կենտրոնի ստեղծմանը, ինչը բեկումնային քայլ է Հայաստանում հիմնարար և կիրառական գիտության զարգացման համար: Երկրորդ որոշմամբ Երևանի ֆիզիկայի ինստիտուտում «Ցիկլոտրոն» համակարգի միջոցով իրականացվելու է իզոտոպների արտադրություն և ստեղծվելու է հատուկ բժշկական կենտրոն չարորակ գոյացությունների վաղաժամ հայտնաբերման և ճշգրիտ ախտորոշում իրականացնելու նպատակով:

Վերջաբան

45. Վերը նշված հակաճգնաժամային և երկարաժամկետ զարգացմանն ուղղված ծրագրերը կշարունակեն իրականացվել Հայաստանի հանրային ֆինանսների կառավարման լավագույն ավանդույթներին համապատասխան, և հանրային միջոցներով իրականացվող այդ բոլոր ներդրումային ծրագրերը կարտացոլվեն պետական ֆինանսական հաշվեկշիռներում (բյուջեում)՝ ապահովելով բարձր մակարդակի հաշվետվողականություն և թափանցիկություն: Մասնավոր հատվածին պետական աջակցության հնարավոր ոչ-ավանդական միջոցառումները կունենան սահմանափակ և ժամանակավոր բնույթ: Կներդրվեն հանրային ներդրումային ծրագրերի գնահատման զարգացած համակարգեր: Կառավարությունը հավատարիմ կմնա իր որդեգրած ազատական տնտեսական քաղաքականության սկզբունքներին և ԱՀԿ և այլ միջազգային կառույցների առջև իր ստանձնած պարտավորություններին: Տնտեսական ճգնաժամի արդյունքում առաջացած քաղաքականության որոշակի ճշգրտման անհրաժեշտությունը ոչ մի դեպքում չի հանդիսանա ազատական քաղաքականության ուղուց շեղվելու պատճառ: